Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Դիլիջանի Վախթանգ Անանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի տղաների խումբ (8 դասաժամ), հայոց լեզվի և գրականության (5 դասաժամ), ֆիզիկայի (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում (Ձև 1), լուսանկար 3x4 չափի,

2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3. անձը հաստատող փաստաթուղթ,

4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5. Ինքնակենսագրություն (Ձև 5),

6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,

8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ նոյեմբերի 16-ից մինչև նոյեմբերի 29-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00 -ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. դեկտեմբերի 6-ին՝ ժամը 15:00-ին**, Տավուշի մարզի Դիլիջանի Վախթանգ Անանյանի անվան միջնակարգ դպրոցում (հասցեն՝ ք. Դիլիջան, Մոլդովական 33/1):

Տեղեկությունների համար զանգահարել (0268)2-62-11 կամ (094)61-72-79 հեռախոսահամարներով: